



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

30 սեպտեմբերի 2017 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության Դատարանի Մեծ կոլեգիան հետևյալ կազմով.

Նախագահող՝ Ֆեդորցով Ա.Ա.,

զեկուցող դատավոր՝ Սկրիպկինա Գ.Ա.

դատավորներ՝ Աժիբրաիմովա Ա.Մ., Այրիյան Է.Վ., Բաիշև Ժ.Ն., Կոլոս Դ.Գ., Նեշատանա Տ.Ն., Սկրիպկինա Գ.Ա., Թումանյան Ա.Է.,

Չայկա Կ.Լ.,

դատական նիստի քարտուղար Նազարովա Բ.-ի

ներկայությունամբ, ուսումնասիրելով գործի նյութերը,

լսելով զեկուցող դատավորին,

դեկավարվելով Եվրասիական տնտեսական միության Դատարանի Կանոնադրույթի 46-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-րդ, 96-րդ, 98-րդ, 72-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության Դատարանի Կանոնակարգի 72-րդ, 85-րդ հոդվածներով,

ներկայացնում է հետևյալ խորհրդատվական եզրակացությունը 2014 թվականի մայիսի 29-ի՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի դրույթների մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դիմումի վերաբերյալ:

I. Դիմողի հարցը

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ դիմող, Հանձնաժողով) դիմել է Եվրասիական տնտեսական միության Դատարան (այսուհետ՝ Դատարան) 2014 թվականի մայիսի 29-ի՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 29-րդ հոդվածի դրույթները պարզաբանելու մասին դիմումով:

Դիմումի մեջ նշված է, որ Հանձնաժողովի կողմից Եվրասիական տնտեսական Միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող՝ Միության ներքին շուկայում գործունեությանն առնչվող միջազգային պայմանագրերի կատարման մշտադիտարկման և վերահսկողության իրականացման ընթացքում հայտնաբերվել են Պայմանագրի 29-րդ հոդվածի դրույթների մեկնաբանման ու կիրառման վերաբերյալ Միության անդամ պետությունների տարբեր մոտեցումներ՝ ապրանքների փոխադարձ առևտրում սահմանափակող միջոցների ներդրման մասով, այն է.

Настоящий перевод с русского языка на армянский язык выполнен верно и полностью соответствует оригиналу.

Заместитель директора _____



Казарцева О.М.

